

Մեծ Շուքով Տօնուեց Յ.Յ.Դաշնակցութեան Օրը

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԱԽԱԳԱՅԸ ԵՐԿՐԻ ՍԱՅՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՐԳԵՐԻ ԵՐԱՇԽԱԴՈՐԸ ՊԵՏՔ Է ԼԻՆԻ

Յայտարարեց ՀՀ Նախագահութեան Թեկնածու Վահան Յովհաննիսեան

ՍԱՐՕ ՆԱԶԱՐԵԱՆ

Շաբաթ, Դեկտեմբերի 15ի երեկոյեան ժամը 6ին, աւելի քան 1500 հրաւիրեալների ու հանդիսականների ներկայութեամբ, Գլէնդէլ միջնակարգ դպրոցի հանդիսասրահում նշուեց Յ.Յ.Դ. օրուայ տօնակատարութիւնը՝ Յ.Յ.Դ. Արեւմտեան Ամերիկայի Կենտրոնական Կոմիտէի կազմակերպութեամբ: Գլխաւոր բանախօսն էր Հայաստանի Ազգային Ժողովի փոխխօսնակ, Յ.Յ.Դ. Բիւրոյի անդամ եւ ՀՀ Նախագահութեան թեկնածու Վահան Յովհաննիսեանը: Հրաւիրեալ հիւրերի թւում էին Հիւսիսային Ամերիկայի Արեւմտեան թեմի առաջնորդ Սուշեղ արք. Սարտիրոսեանը, Հայաստանեայց եկեղեցւոյ Հիւսիսային Ամերիկայի Արեւմտեան թեմի առաջնորդ Յովնան արք. Տէրտրեանը, յարանուանութիւնների ներկայացուցիչներ, ՀՀ գլխաւոր հիւպատոս Արմէն Լիլոյեանը, Յ.Յ.Դ. Բիւրոյի անդամ դոկտ. Վիգէն Յովսէփեանը, Քալիֆորնիայի նահանգային խորհրդարանի անդամ Փօլ Գրիգորեանը, Կլէմտէյի քաղաքապետ Արա Նաճարեանը, ազգային կուսակցութիւնների, հասարակական, մշակութային, հայրենակցական միութիւնների ու կազմակերպութիւնների եւ մամլոյ ու հայկական հեռուստակայանների ներկայացուցիչները: Յ.Ս.Ը.Ս.ի սկաուտների դրօշի արարողութիւնից յետոյ, հնչեցին Միացեալ Նահանգների եւ Հայաստանի Հանրապետութեան հիմներգերը՝ «Շամլեան» ազգային վարժարանի աշակերտութեան եւ Յ.Յ.Դ. «Մշակ բանուոր» հիմներգը՝ Փայլա Գեորգեանի կատարմամբ, որոնք յտընկայս ունկնդրուեցին ներկաների կողմից: Յ.Յ.Դ. օրուայ տնօակատարութեան հանդիսավարն էր «Շամլեան» ազգային վարժարանի տնօրէն Վազգէն Սատենլեանը, որը իր բացման խօսքում նախ բոլորից խնդրեց մէկ րոպէ յտընկայս լռութեամբ յարգել հայ ժողովրդի ազգային ազատագրական պայքարի ճանապարհին զոհուած հերոսների յիշատակը եւ ապա անդրադառնալով տօնակատարութեան իմաստին, դիտել տուեց, որ «Դաշնակցութեան օրուան տօնակատարութիւնը միշտ եղած է հաշուետուութեան օր: Հաշուետուութիւն՝ կուսակցութեան մօտակայ անցեալ գործունէութեան մասին ընդհանրապէս, եւ մեր պարագային՝ Արեւմտեան Ամերիկայի շրջանէն ներս մասնաւորաբար: Այս տարի սակայն, սոյն տօնակատարութիւնը կը ստանայ յատուկ նշանակութիւն՝ մօտ ապագային Հայաստանի մէջ կայանալիք նախագահական ընտրութեանց պատճառով»: Հանդիսութեան ընթացքում ցուցադրուեց Հայ երիտասարդաց դաշնակցութեան պատրաստած խորապէս տպաւորիչ ու վաւերական տեսաերիզը, որով ներկայացոււն էր Յ.Ե.Դ. Արեւմտեան Ամերիկայի հաստատական երիտասարդների պայքարի քայլարշաւը մինչեւ Սաքրամենթօ,

բողոքի ու ցասունի հնչեղութիւնը թուրքական ուրացման դէմ եւ «յեղափոխութիւնը ընթացքի մէջ է» նշանաբանով Զ.Ե.Դ.ի երթը՝ հայ ժողովրդի արդար իրաւունքների վերահաստատման ի խնդիր: «Ինչպէս ականատես ենք բոլորս, յեղափոխութիւնը ընթացքի մէջ է», տեսաերիզի ցուցադրումից անմիջապէս յետոյ ունեցած իր ելոյթում յայտարարեց Զ.Ե.Դ. Արեւմտեան Ամերիկայի Կենտրոնական վարչութեան ատենապետ Գասպար Գիւլէլէկեանը: «Յեղափոխութիւնը սկսեց 117 տարի առաջ՝ Զայ Յեղափոխական Դաշնակցութեան հիմնադրմամբ, նպատակ ունենալով ծառայել ու պաշտպանել հայ ժողովրդի իրաւունքները ամէնուրեք: Այդ յեղափոխութիւնը շարունակուեց 1933 թուականին՝ Զայ երիտասարդաց դաշնակցութեան հիմնադրմամբ: Այդ թուականից ի վեր Զ.Ե.Դ.ն կանգնեց ու հանդէս եկաւ հայ երիտասարդական շարժման առաջատար ճակատի վրայ: Մեր պայքարն անցաւ սերնդից սերունդ, չկորցնելով սակայն իր առաքինութիւնը: Զ.Ե.Դ.ն միշտ էլ պատրաստակամ է առաւել քայլեր ձեռնարկել հայ ժողովրդի բարօրութեան ու Զայաստանի համար, որին մենք սիրում ենք ամբողջ հոգով: Մեր յեղափոխութիւնը ընթացքի մէջ է, սակայն իր աւարտին չի հասել: Առաջընթաց արձանագրուել է, սակայն մեզ համար այն բաւարար չէ», յայտարարեց Գասպար Գիւլէլէկեանը եւ անդրադառնալով վերջին տարիներին, մասնաւորաբար վերջին ամիսներին արձանագրուած յաջողութիւններին՝ Զայոց Ցեղասպանութեան ճանաչման կապակցութեամբ, շեշտեց, որ հայ երիտասարդութեան համար բաւարար չեն այդ առաջընթացները այնքան ժամանակ, քանի դեռ չեն հատուցուել հայ ժողովրդի անսակարկ իրաւունքները: Նա կոչ ուղղեց հայ ծնողներին, որ իրենց զաւակների հոգում ամրակայեն հայ լինելու եւ հայօրէն ապրելու գիտակցութիւնը: «Սովորեցրէ՛ք ձեր զաւակներին, թէ ինչ է նշանակում հայ լինելը, խօսեցէ՛ք նրանց հետ մեր ազատ ու անկախ Զայաստանի մասին, նրանց Զայաստան տարէ՛ք, ասացէ՛ք նրանց, որ խօսեն ու ապրեն հայօրէն: Պատմեցէ՛ք նրանց Զայոց Ցեղասպանութեան մասին եւ յիշեցրէ՛ք նրանց, որ իրենց նախնիները զոհուեցին, որպէսզի իրենք այսօր հայ մնան: Նրանց անհրաժեշտ է իմանալ այս բոլորը», եզրակացրեց Գասպար Գիւլէլէկեանը:

Ելոյթ ունենալով տօնակատարութեանը, Զ.Յ.Դ. Արեւմտեան Ամերիկայի Կենտրոնական Կոմիտէի անդամ Նազօ Աբանեանը փոխանցեց Կենտրոնական Կոմիտէի խօսքը: «Դաշնակցութեան Ամերիկայի տարածքին Զայ Դատի գծով տարած աշխատանքները երէկ չէ, որ սկսած են, այլ անոնք սկիզբ առին եւ շարունակուեցան ասկէ շուրջ 7 տասնամեակ առաջ: Այդ աշխատանքները երբեք դադար չեն առներ, այդ ջանքերը երբեք հանգիստ չեն ունենար, այդ աշխատանքները երբեմն կ'ըլլան քուլիսներու ետին, երբեմն կ'ըլլան նեղ հայկական շրջանակներու մէջ, յաճախ կը փոխադրուին եւ կ'առնչուին օտար քաղաքական շրջանակներու հետ, երբեմն տեղի կ'ունենան, պէտք է անկեղծ ըլլալ եւ խոստովանիլ ասիկա, այո, տեղի կ'ունենան տատանումներ, կ'ըլլան ընկերկողներ, կ'ըլլան խարխափողներ, սակայն միշտ ալ աւելի բազմանդամ եղած են, աւելի շատ եղած են անոնք, որոնք պատրաստ գտնուած են նուիրուելու այդ աշխատանքին, ծառայելու այդ նպատակին: Ասոր, սիրելիներ, դուք բոլորդ ականատես եղաք այս տարի: Տարիներ շարունակ Ցեղասպանութեան փաստը ուրացողներ, Ցեղասպանութեան ճանաչման առջեւ արգելքներ յարուցանողներ, Ցեղասպանութեան վերապրողները անգամ մը եւս

իրենց ուրացումով չարչարողներ՝ Հայ Դատի յանձնախումբերուն եւ ձեր բոլորին նուիրումին ու մասնակցութեան շնորհիւ եկան ընդունելու Ցեղասպանութեան իրողութիւնը: Եթէ դուք հետեւեցաք Քոնկրէսի քննարկումներուն եւ անոր հետեւող իր նմանը չունեցող, իր չափով ու ծաւալով ամէն մարդ զարմացնող միտիայի անդրադարձին, դուք տեսաք, հպարտօրէն վկան եղաք այն հանգամանքին, որ այսօր, 2007 թուականին, 1915ի եղեռնէն 92 տարիներ ետք, բոլորը, ըլլան անոնք պետական հեղինակութիւններ թէ մամլոյ ներկայացուցիչներ, ընդունեցին Հայկական Ցեղասպանութեան իրողութիւնը: Անոնք բոլորը իրենց քաղաքական զանազան հաշիւներուն համար եւ ժամանակ շահելու նպատակով, պահի անյարմարութիւնն ու քաղաքական որոշ շահեր առաջ քաշեցին, սակայն ընդունեցին ցեղասպանութեան պատմական փաստը, այսպիսով մեր դատի հանգրուանային պայքարի ժամանակացոյցին վրայ յաղթանակի նոր էջ մը բանալով», ակնարկելով Միացեալ Նահանգների Քոնկրէսի 106րդ բանաձեւին, ասաց Նազօ Աբանեանը: «Սփիւռքի թէ Հայաստանի կամ Արցախի մէջ,- նշեց նա,- հայեր դիմած են Դաշնակցութեան, երբ անօգնական զգացած են եւ Դաշնակցութիւնը միշտ հոն գտնուած է եւ ապագային ալ պիտի գտնուի հոն՝ ուր հայը կարիքը կը զգայ օգնութեան, եւ այս օգնութիւնը, սիրելիներ, պիտի չըլլայ պայմանաւորուած, ի տարբերութիւն այլոց, այլ այս օգնութիւնը պիտի ըլլայ անսակարկ, որովհետեւ Դաշնակցութիւնը կրնայ սխալիլ, Դաշնակցութիւնը կ'ընդունի, որ սխալական է եւ ամենակարող չէ, սակայն Դաշնակցութիւնը կը մերժէ ու պիտի մերժէ մէկ բան՝ ան պիտի չընդունի որեւէ փորձ, որ հարցականի տակ կ'առնէ իր նուիրումն ու յանձնառութիւնը հանդէպ Հայ ժողովուրդին, Հայաստանի ու Հայ Դատին»:

ՆԱԽԱԳԱՐՆ Է ՍԱՐՄԱՆԱԴՐՈՒԹԵԱՆ ԵՐԱՇԽԱԲՈՐԸ

«Մէկ-մէկ մեզ ասում են, սիրելի բարեկամներ, ինչպէ՞ս կարող է դաշնակցական նախագահը ղեկավարել մի երկիր, որտեղ խորհրդարանական մեծամասնութիւնը այլ կուսակցութիւնից է եւ հէնց այդ կուսակցութիւնն էլ ձեւաւորում է, ըստ սահմանադրութեան՝ կառավարութիւն: Ինչպէ՞ս դաշնակցական նախագահը կը կարողանայ ղեկավարել երկիրը: Այս հարցը տալիս են մարդիկ, որոնք չեն հասկացել, թէ նախագահի իրական գործունէութիւնը ինչուն է կայանում: Մարդիկ կան, որ իրենց թւում է, որ նախագահական պալատում պէտք է վճռուեն բոլոր մեծ ու մանր հարցերը: Իբր նախագահը գալու է եւ պէտք է սկսի նոր նախարարներ նշանակել, նախարարական նոր պաշտօններ բաժանել եւ այլն: Դա չի նախագահի անելիքը: Նախագահը պէտք է ուղղակի մէկ ընդ միշտ ապահովի սահմանադրական կարգը: Այսինքն, կանչի բոլոր նրանց, ովքեր որ խարդախութեամբ ապահովում են ընտրութիւնների ցանկալի արդիւնքը եւ նրանց ասի. «Տղաներ, ոչ ոք այլեւս ձեր օգնութեան կարիքը չունի: Գնացէ՛ք տուն: Այլեւս ընտրութիւններում որոշիչը լինելու է ժողովրդի ձայնը, միայն»,

յայտարարեց Հայաստանի Հանրապետության նախագահական թեկնածու Վահան Յովհաննիսեանը՝ Հ.Յ.Դ. օրուայ տօնակատարութեանը ունեցած ելոյթում, որը ներկայացուեց հարցազրոյցի ձեւով:

Սոյն հարցազրոյցը հմտօրէն վարեց քաղաքական հարցերի փորձագէտ, իրաւաբան Սեդօ Պոյաճեանը: «Նախագահը պատասխանատու է սահմանադրական կարգի պահպանման համար, նշեց Վահան Յովհաննիսեանը, որը կատարուում է մասամբ կառավարական հաստատութիւնների, միւս մասամբ դատական իշխանութեան ճանապարհով՝ Սահմանական դատարանի, դատարանների եւ այլն: Այո՛, դատական իշխանութիւնը անկախ է, բայց այդ անկախութեան պատասխանատուներն են նախատելի: Նախագահը պէտք է խստագոյնս պատժի բոլոր նրանց, ովքեր համարձակուում են զանգահարել իրենց բարձր պաշտօնական աթոռից որեւէ դատաւորի եւ ազդել այդ դատաւորի որոշման վրայ: Սա է սահմանադրական կարգի ապահովումը: Եւ եթէ նախագահը իսկապէս այս պարտաւորութիւնները իրականացնի, մի՛ մտածէք, նրա իշխանութիւնը այնքան է, որ բաւարար է երկրում կարգ ու կանոն հաստատելու համար: Իսկ բնական է, որ նախագահը չպէտք է խառնուի նախարարութիւնների գործին: Չպէտք է ուղղութիւն տալ ամէն մանր հարցում: Նա պէտք է ապահովի երկրի անվտանգութեան ռազմավարութեան կատարումը: Եւ սրա համար, թէ՛ սահմանադրութիւնը, եւ թէ՛ օրէնքները բաւական ուժի պաշար նրան տալիս են»:

Իսկ, թէ ինչո՞ւ Դաշնակցութիւնը որոշեց սեփական թեկնածուով մասնակցել 2008 թուականի նախագահական ընտրութիւններին, նախագահական թեկնածու Վահան Յովհաննիսեանը ծանրանալով այն իրողութեան վրայ, որ այսօր կուսակցութիւնը ձեռք է բերել պետական կառավարման փորձ եւ դաշնակցական թեկնածուները անցել են քաղաքական ու վարչարարական դեկավարման դպրոց, ընդ որում, դաշնակցական թեկնածուները գալիս են իշխանութեան ներսից, ուստի, եզրակացրեց նա, Դաշնակցութիւնն այսօր կարող է երաշխաւորուած փոփոխութիւններ կատարել երկրում, բայց կայունութեան պայմաններում: «Ծայրայեղութիւնները մի կողմից ոչ մի փոփոխութեան անհրաժեշտութիւն չեն տեսնում, ինչպէս մենք նկատում ենք իշխանութեան որոշ շրջանակներում, որոնք համարում են, որ դէ՛, ամէն ինչ լաւ է. բոլորը ժպտում են, քաղաքում կառուցապատում է գնում, կարծես, թէ ամէն ինչ լաւ է, էլ ի՞նչ փոփոխութիւններ: Իսկ մենք տեսնում ենք փոփոխութիւնների անհրաժեշտութիւնը: Բայց միւս ծայրայեղութիւնը՝ նախկին իշխանութիւնները, որոնք գալիս են ամէն ինչ քանդելու, փշրելու համար, դրանց էլ չենք ընդունում, բացառուած է, որովհետեւ միայն կայունութեան պայմաններում հայ ժողովուրդը կարող է ինչ-որ յաջողութիւնների հասնել այսօր: Եւ սրանով է պայմանաւորուած մեր գործուն մասնակցութիւնը այս փուլում», շեշտեց Վահան Յովհաննիսեանը եւ աւելացրեց. «Ժողովրդի որոշ մասի մէջ այն տպաւորութիւնը կայ, որ իշխանութեան հարցը Հայաստանում արդէն լուծուած է: Խորհրդարանական ընտրութիւններում մեծամասնութիւն ձեռք բերած կամ մեծամասնութիւն արձանագրած քաղաքական ուժն էլ կ'որոշի նախագահին: Բայց իրականութիւնը բոլորովին այդպէս չէ: Աւելին, եթէ այդպէս լինի, Հայաստանը կը կանգնի բաւականին ծանր կացութեան առջեւ, որով կը ստեղծուի միապետական իշխանութիւն եւ թէ՛ խորհրդարան, թէ՛ կառավարութիւնը եւ թէ՛ նախագահի աթոռը (որը ի միջի այլոց գահ չի եւ եթէ ինչ-որ մարդիկ

ծգտում են նախագահական աթոռին, որովհետեւ կարծում են, որ դա գահ է, նրանք սխալում են. դա ծանր պարտականութիւն է), այսինքն իշխանութեան այս երեք բեւեռները կը յայտնուի մէկ քաղաքական ուժի ձեռքում, ապա Հայաստանում ժողովրդավարական զարգացումը կը վտանգուի: Կը վտանգուի, որովհետեւ փոխադարձ վերահսկելիութեան, վերահսկողութեան եւ հաւասակշռութեան հնարաւորութիւնները փաստօրէն կը կորչեն»:

Իսկ անդրադառնալով Արցախի հիմնահարցին, Վահան Յովհաննիսեանը միանշանակ շեշտեց, որ «Արցախի հարցում մեր ձեռք բերած դիրքերից, մեր ձեռք բերած դիրքորոշումներից, նուաճումներից նահանջ չպէտք է արձանագրի Հայաստանի Հանրապետութեան նախագահը, ո՞ր կուսակցութիւնից էլ, որ լինի: Դա մեզ համար շատ յստակ է: Եւ ինձ օրինակ յաճախ հարցնում են՝ տարածքներ վերադարձնելու կողմ կը լինե՞ք, եթէ նախագահ լինե՞ք,- պատասխանը շատ յստակ է: Հայաստանի Հանրապետութեան նախագահը ի՞նչ զիջումների մասին պիտի խօսի, եթէ ոչ մի անգամ չենք լսել, թէ Ադրբեյջանի կողմից զիջումը ո՞րը պիտի լինի: Ադրբեյջանը դեռ մինչեւ հիմա ոչ մի անգամ չի ասել, որ վերջապէս ինքը ի՞նչ է զիջելու: Ինչի՞ պիտի Հայաստանի Հանրապետութեան նախագահը խօսի ինչ-որ տարածքներ զիջելու մասին: Ես կարծում եմ, որ մանաւանդ, եթէ կան տարածքներ, որոնք կենսական նշանակութիւն ունեն, դրանց զիջումի մասին որեւէ խօսակցութիւն ընդհանրապէս բացառուած է», շեշտեց Վահան Յովհաննիսեանը եւ աւելացրեց. «Բայց ի վերջոյ խաղաղութիւնը եւ խաղաղութեան հաստատումը մեր տարածաշրջանում մեզ համար կենսական նշանակութիւն ունի: Ուրեմն, մենք չպէտք է կարծի կեցուածք ընդունենք, երկու ոտքը մի կօշիկի մէջ դնելով, ընդհանրապէս չնկատենք, որ հարեւաններ ունենք: Այդպէս էլ չես կարող անել: Ուրեմն, դու պէտք է պատրաստ լինես որոշակի զիջումների, բայց միայն այն պարագայում, եթէ դրանք փոխզիջումներ են: Հիմա եթէ փոխզիջումների գանք, հարցի լուծմանը աւելի կը մօտենանք», ասաց նախագահական թեկնածու Վահան Յովհաննիսեանը եւ շեշտեց. «Արցախը, Արցախի հողը նոյնքան իմն է, ինչքան Երեւանը»: Իսկ խօսելով հայ-թուրքական յարաբերութիւնների մասին, Վահան Յովհաննիսեանը յայտարարեց. «Հայ Յեղափոխական Դաշնակցութիւնը, իմ կարծիքով, այն միակ քաղաքական ուժն է Հայաստանում, որը թուրքերի հետ աւելի հեշտ լեզու կը գտնի, քան մնացած բոլոր ուժերը, որովհետեւ իրենք մեզ գիտեն, մենք էլ՝ իրենց: Նրանք մեզ լաւ են ուսումնասիրել, մենք էլ՝ իրենց. եւ չեն կարծում մեր մէջ որեւէ քննարկում, որեւէ բանակցութիւն բոլորովին անպտուղ կը լինի: Հակառակը: Որովհետեւ մենք կարող ենք բաց ասել մեր պահանջը եւ ի վերջոյ աշխատել այն բանի վրայ, որ Թուրքիան հասունանայ, թուրքական հասարակութիւնը հասունանայ՝ առնուազն մեր պահանջը հասկանալու համար: Մենք պէտք է հասկանանք, որ այսօր կռուի, աւելորդ աղմուկի, թշնամանքի հարց չենք լուծում: Մենք ուղղակի պէտք է փորձենք նրանց հասկացնել, թէ ինչու է կայանում մեր պահանջը եւ մեր պահանջի բաւարարման ճանապարհին, իրենք ինչ շահ կ'ունենան: Ես կարծում եմ, որ դա իսկապէս Դաշնակցութիւնը կարող է անել», յայտարարեց Վահան Յովհաննիսեանը:

Պատասխանելով իր ընտանեկան-անձնական կեանքի մասին հարցումների, Վահան Յովհաննիսեանն ասաց, թէ շատ է սիրում դասական եւ ռոք երաժշտութիւնը, գեղարուեստական գրականութիւնը: Նա ասաց, որ սիրում է

նաեւ յեղափոխական երգերը, սակայն ոչ բոլորի կատարմամբ, որովհետեւ մի շարք երգիչներ այնպիսի կլկլոցներով են երգում, որ կարծեք ատրպէյճանցիներն են յաղթել... «Իսկ տղայիս հետ ի՞նչ խաղամ, նա Ջայաստանի բանակի սպայ է...», անելացրեց նա սրամտութեամբ:

Յ.Յ.Դ. օրուայ տօնակատարութիւնը ճոխացուեց գեղարուեստական յայտագրով, ուր նախ ելոյթ ունեցաւ երեւանեան քաղաքային ռոմանսի մեկնաբաններից Արմէն Մովսիսեանը: Խմբական երկու պարերով հանդէս եկան Յովիվուդի «Ռոզ եւ Ալէք Փիլիպոս» ազգ. միջնակարգ դպրոցի աշակերտուհիները, իսկ ձեռնարկի ակադեմիային, յեղափոխական երգերով ելոյթներ ունեցան Անահիտ Խաչիկեանը եւ Ներսիկ Իսպիրեանը: Տօնակատարութիւնը փակուեց երեկոյեան ժամը 9ին: